10. Համայնքի ղեկավարը.

ա) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքի ինտերնետային կայքը և այլ իրազեկման միջոցներ:

բ) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումների մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար:

գ) կազմակերպում է տեղական ինքանակռավարմանն առընչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնողներին և նախագծերի հեղինակներին:

դ) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:

11. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և քննարկումներ:

Արևաշողի գյողապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Ս.Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«04»«Օգոստոսի»2014Թ

ԼՄԱՀ № 082

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արեվաշող համայնք, հասցե գ._Արեվաշող,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Պ-ՐՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու 2014թ – ի թիվ 12-Ա և 13-Ա որոշումները:

Առդիր 6 թերթ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«29»«Հուլիսի 2014թ
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արեվաշող համայնք, հասցե գ._Արեվաշող,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հուլիսի 2014 թվականի № 012-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՀԱՍՄԻԿ» ՆՈՒՀ ՀՈՒԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 4-րդ հոդվածները, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածով ինչպես նաև 60 – րդ և 72 – րդ հոդվածներով

Արևաշող համայնքի ավագանի որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի գյուղապետարանի և նրա ենթակայության «ՀԱՍՄԻԿ» ՆՈՒՀ ՀՈԱԿ – ի աշխատակազմի 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված և լրիվ դրույքաչափով աշխատող աշխատակիցների համար նվազագույն աշխատավարձի չափը սահմանել 70822 դրամ:
2. Հաստատել Արևաշող համայնքի «ՀԱՍՄԻԿ» նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ – ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Արևաշող համայնքի ավագանու 06. 06. 2014թ – ի «Արևաշող համայնքի «ՀԱՍՄԻԿ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ» – Ի 2014թ – Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 8-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
ԱԴԱՄՅԱՆ Ա.Ա.			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ.Ն			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա.Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա.Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ.Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ.Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ.Ս			

Արևաշող համայնքի ղեկավար՝ _____ **Պ. Պապիկյան**

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված
Արևաշող համայնքի ավագանու
2014թ – ի Հուլիսի 29 – ի
թիվ 12-Ա որոշման

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՍՄԻԿ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ – Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

	Հաստիքի անվանումը	Հաստիքայինմ իվորների թիվը	Պաշտոնական դրույքաչափը (հազար) հհ դրամ
1.	Տնօրեն	1	128.0
2.	Հաշվապահ	1	104.0
3.	Տնտեսվար	1	83.0
4.	Դաստիարակ	2.5	72.0
5.	Դաստիարակի օգնական	2	71.0
6.	Բույժքույր	1	71.0
7.	Գործավար	1	71.0
8.	Երաժշտության ուսուցիչ	0.5	142.0
9.	Խոհարար	1	67.0
10.	Խոհարարի օգնական	1	67.0
11.	Դռնապան	1	67.0
	Ընդամենը	13	943.0

ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«29»«Հուլիսի 2014թ №013-Ա

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արեվաշող համայնք, հասցե գ._Արեվաշող,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 33 – րդ մասի համայնքի

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
ԱԴԱՄՅԱՆ Ա.Ա.			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ.Ն			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա.Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա.Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ.Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ.Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ.Ս			

Համայնքի ղեկավար՝ Պ.Պապիկյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Արևաշող համայնքի ավագանու
2014 թ Հուլիսի 29 - ի
թիվ 12 որոշման.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակիչների (այսուհետև՝ բնակիչներ) մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:
2. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:
3. Բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև սույն կարգով:
4. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:
5. Գյուղապետարանի աշխատակազմը համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով:
6. Տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունք ունի համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:
7. Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ բնակիչների ոչ պակաս, քան երկու կամ չորս տոկոսը: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին:

Բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանում է ավագանու կանոնակարգով:

8. Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների նախաձեռնությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է ավագանու նիստին՝ ավագանու քննարկմանը:
9. Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո: